ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 407-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ 414.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԵՏ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի՝ համակցված 414.2-րդ հոդվածի հետ՝ Սահմանարդությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Ռոբերտ Քոչարյանի դիմումը (դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Ա. Վարդևանյան) Սահմանադրական դատարանում մուտքագրվել է 2019 թվականի սեպտեմբերի 27-ին:

Դիմողը Սահմանադրական դատարանին խնդրել է. «.... որոշել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածը՝ համակցված 414.2-րդ հոդվածի հետ հոդվածի (այնքանով, որքանով պարտադիր չեն ապահովում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից անձի կալանավորման դեպքում Վճռաբեկ ատյանում կալանավորման որոշման իրավաչափության բացահայտման, օրինականության ստուգման հնարավորություն) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթների իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները»:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածը՝ համակցված 414.2-րդ հոդվածի հետ, երաշխավորելով անձի՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունքը և դրա իրացման ընթացակարգային պարտավորություն-ները, միաժամանակ առանձնահատկություն չի նախատեսում այն դեպքերի համար, երբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից է անձը կալանավորվում: Նման իրավակարգավորումների պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից քննու-թյան չի առնվում անձին կալանավորելու մասին վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությունը, ինչն, ըստ դիմողի, առաջացնում է Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի և Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտումներ:

Դիմողն արձանագրում է, որ «Վճռաբեկ դատարանի նախադեպային իրա-վունքի ուսումնասիրությունը (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՏԴ2/0009/06/11, թիվ ԵԿԴ/0058/11/09, թիվ ԵԱԴԴ/0085/06/09, թիվ ԿԴ1/0007/06/12, թիվ ԵՇԴ/0105/06/12 և մի շարք այլ գործերով) ևս փաստում է, որ բացակայում է որևէ որոշում այն դեպքերը կարգավորող, երբ անձը կալանավորվում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից»:

Դիմողը պնդում է, որ Վճռաբեկ դատարանը նման իրավիճակները գնահատում է ինչպես գործն ըստ էության չլուծող ցանկացած այլ ակտի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելիս հղում տալով ըստ էության վիճարկվող հոդվածներին: Սակայն նշվածը չի կարող հիմնավորում հանդիսանալ Վճռաբեկ դատարանի նման որոշման համար, քանի որ չնայած նշված օրենսդրական բացերին՝ անձի անձնական ազատության իրավունքը, հանդիսանալով Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված մարդու հիմնական իրավունք, օժտված է անմիջականորեն գործելու սահմանադրական երաշ-խիքով:

Դիմողը գտնում է. «Արդյունքում խախտվել է նաև ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլի չպահպանելով նաև ՍԴՈ-1459 որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումը, որ Վճռաբեկ դատարանը պետք է պարզի կալանավորման իրավաչափությունը, եթե այն վրա է

հասել ՀՀ վերաքննիչ ատյանում, ինչը հնարավոր չէ իրականացնել պարզապես դիտարկելով վճռաբեկ բողոքի սոսկ վարույթի ընդունելիության լույսի ներքո»:

Դիմողը տվյալ դեպքում վերջնական դատական ակտ է համարում ՀՀ վճռաբեկ դատարանի 2019թ. սեպտեմբերի 20-ի և մարտի 22-ի որոշումները, որոնցով որպես խափանման միջոց՝ կալանավորում կիրառելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումների դեմ իր վճռաբեկ բողոքները վարույթ չեն ընդունվել, կայացվել են վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումներ և որևէ անդրադարձ չի կատարվել կալանավորման իրավաչափության գնահատման հարցին, այսինքն՝ ըստ էության այն քննության առարկա չի հանդիսացել և դիտարկվել է բացառապես վարույթ ընդունելու/մերժելու ստանդարտի շրջանակներում, ինչը պայմանավորված է, ի թիվս այլնի, իրավունքի բացով:

3. Ուսումնասիրելով դիմումը և կից փաստաթղթերը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության, ինչպես նաև լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոններն ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր

միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական նշյալ նորմի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով մանրամասնվում և կանոնակարգվում են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջները:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին (1-ին կետ), եթե առկա են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերից որևէ մեկը (6-րդ կետ): «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:

Դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողը վիճարկում է երկու վերջնական դատական ակտերով՝ Վճռաբեկ դատարանի 2019 թվականի մարտի 22-ի և 2019 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումներով կիրառված իրավական դրույթների սահմանադրականությունը:

Վճռաբեկ դատարանի 2019 թվականի մարտի 22-ի որոշման մասով դիմողը չի պահպանել Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 6-ամսյա ժամկետը:

Վճռաբեկ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 20-ի որոշման մասով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ դիմողի կողմից

բարձրացված հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել 2019 թվականի մայիսի 7-ի ՍԴՈ-1459 որոշմամբ, որի մասին նշել է նաև դիմողը՝ որպես դիմումի ներկայացման հիմնավորում ընդգծելով Վճռաբեկ դատարանի կողմից այդ որոշման պահանջները չկատարելը: Այլ կերպ՝ դիմողը, բարձրացնելով վերջնական դատական ակտով կիրառված իրավական դրույթների սահմանադրականության հարց, դիմումով ներկայացնում է առավելապես այնպիսի հիմնավորումներ, որոնք ըստ էության վերաբերում են այդ դրույթների կիրառման իրավաչափությանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 69-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի՝ համակցված 414.2-րդ հոդվածի հետ՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ**

18 հոկտեմբերի 2019 թվականի
ՍԴԱՈ-113